ԱՂՎԱՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

ԱՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դարեր ի վեր Աղվանքը եղել է Մեծ Հայքի դրացի երկիրը, սերտ հարաբերությունների մեջ է եղել հարևանների հետ, սակայն ինչ-ինչ հանգամանքների բերումով աղվանները պատմության թատերաբեմը զիջեցին Անդրկովկաս ներխուժած վայրկատուն ցեղերին: Վերջիններս սեփականացրին բուն Աղվանքի տարածքը, իսկ նրանց ադրբեջանցի հետնորդ գիտնականները փորձում են հավակնություններ ներկայացնել հարևան պետությունների նկատմամբ:

Այդ գործում աչքի է ընկնում հատկապես Ֆ. Մամեդովան[1], որը չափազանց տարված է անտիկ և հայ հեղինակների հաղորդումները ժխտելու մոլուցքով[2]: Ըստ նրա, պատմական իրականությանը չեն համապատասխանում Անանիա Շիրակացու հաղորդումները Արցախը և Ուտիքը Հայաստանի կազմում լինելու վերաբերյալ[3]: «Աշխարհացույց»-ը, հատկապես Անդրկովկասին վերաբերող մասը, հեղինակը շարադրել է հավաստի նյութերի հիման վրա, և ուսումնասիրողներն էլ բարձր են գնահատում նրա հաղորդումները: Այդ հանգամանքը, սակայն, չի հետաքրքրում Ֆ. Մամեդովային, նա չի ուզում տեսնել «Աշխարհացույց»-ի բառացի հաղորդումը Աղվանքի սահմանների վերաբերյալ:

Ֆ. Մամեդովան չի ընդունում նաև անտիկ հեղինակների հաղորդումները Կուրի՝ Աղվանքի հարավային սահման լինելու մասին: Սակայն ադրբեջանցի հեղինակը չունենալով որևէ սկզբնաղբյուր իր տեսակետներն ապացուցելու համար, վկայակոչում է Մովսես Խորենացուն և Մովսես Կաղանկատվացուն, որոնք, իբր թե Աղվանքի սահմանը ցույց են տալիս Արաքս գետը[4]: Սակայն Մովսես Խորենացին Արաքս գետից Հնարակերտ ընկած տարածքը նշում է որպես Հայոց թագավոր Վաղարշակի ենթակայության տակ գտնվող գավառներ[5], իսկ Մովսես Կաղանկատվացին էլ նկարագրում է Արաքս գետից Հնարակերտ ընկած

---

[1] Ф. М а м е д о в а. Политическая история и историческая география Кавказской Албании. Баку. 1986.

[2] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանքը սկզբնաղբյուրներում և պատմական գրականության մեջ (համառոտ պատմաշխարհագրական ակնարկ).– «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), Երևան, 1989, №2, էջ 149:*

[3] Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ 109, 112:*

[4] *Նույն տեղում, էջ 145:*

[5] *Մ ո վ ս է ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խ ո ր ե ն ա ց ի), քննական բնագիրը և ներածութիւն Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, գ. Բ, գլ. Ը, էջ 113:*

տարածքը, քանի որ ցույց է տալիս հայկական այդ երկրամասի աշխարհագրական պատկերը[6]:

Ֆ. Մամեդովան, «քննելով» Ալբանիայի սահմանները, հարավային սահմանի վերաբերյալ նշում է. «...համաձայն Մովսես Կաղանկատվացու և «Աշխարհացոյց»-ի, Ալբանիայի սահմանը շարունակում է մնալ Արաքս գետը»[7]: Նմանօրինակ անհիմն և հակագիտական հաղորդումներով լեփ լեցուն են ոչ միայն Ֆ. Մամեդովայի, այլև ադրբեջանցի մյուս հեղինակների աշխատությունները, որոնց հիմնական մասն էլ իր արժանի գնահատականն է ստացել հայ պատմագիտության մեջ[8]:

Վերջերս լույս տեսավ Ֆ. Մամեդովայի ևս մեկ աշխատություն[9], որը ինչպես և նախորդները խիստ հակահայկական է ու հակագիտական, և դրանում հեղինակը կանգ չառնելով պատմական փաստերը նենգափոխելու առջև, փորձում է սեփականացնել հազարամյա ժողովրդի պատմության այս կամ այն դրվագը, քանի որ իրենց իսկ երկրի պատմությունն ունի մի քանի տասնյակ տարվա կյանք (1918 թ.-ից): Ադրբեջանցի հեղինակները փորձում են ստեղծել նոր «տեսություն»՝ հայկական Ուտիքը և Արցախը ներառելով Ադրբեջանի կազմում: Սակայն, ինչպես կտեսնենք, թե՛ հայկական, թե՛ օտար աղբյուրները միանշանակ Աղվանքի հարավային սահման են ճանաչում Կուր գետը:

Առաջնահերթ տեղ ունի VII դ. ստեղծված Անանիա Շիրակացու նշանավոր «Աշխարհացոյց»-ը, որը մեզ է հասել համառոտ[10] և ընդարձակ[11] խմբագրություններով, ունեցել է բազմաթիվ հրատարակություններ[12]: «Աշխարհացոյց»-ը պատմաաշխարհագրական հուշարձան է՝ նվիրված Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Իրանի, ինչպես նաև Եվրոպայի, Աֆրիկայի աշխարհագրական նկարագրությանը: Եվ այս բոլոր երկրների մասին հեղինակը խոսում է քաջատեղյակությամբ, ինչը բացառիկ երևույթ է իր դարի պատմության մեջ, ուստի պատահական չէ նրա նկատմամբ ուսումնասիրողների հետաքրքրությունը[13]:

---

[6] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Ազուանից աշխարհի (այսուհետև՝ Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի), քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, Ա, գլ. Դ, էջ 8.*

[7] Ф. М а м е д о в а. *Նշվ. աշխ., էջ 145:*

[8] Б. А р у т ю н я н. Когда отсутствует научная добросовестность.– *«ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1987, № 7, էջ 33–56,* А. А. А к о п я н, П. М. М у р а д я н, К. Н. Ю з б а ш я н. К изучению истории Кавказской Албании. — *ՊԲՀ, 1987, № 3, էջ 166-198,* Г. С в а з я н. Пример использования исторической науки в экспансивных целях.– *« Բանբեր Երևանի համալսարանի », № 2, էջ 46–56,* А. В. М у ш е г я н. Псевдоалбанская литература и ее апологеты. — *ԼՀԳ, 1989, № 3, էջ 16-33.* Ш. В. С м б а т я н. Еще раз о южной границе Кавказской Албании.– *ԼՀԳ, 1989, № 10, էջ 3-17.*

[9] Ф. М а м е д о в а. Кавказская Албания и албаны. Баку, 2005.

[10] К. П а т к а н о в. Армянская География VII века. СПб., 1877.

[11] *Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յավելուածովք նախնեաց (այսուհետև՝ Աշխարհացոյց), Վենետիկ, 1881:*

[12] *Բ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մեծ Հայքի վարչա-տարածքային բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 5-38:*

[13] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջ, Երևան, 1940, Ա.*

Աղվանքի աշխարհագրական սահմանների, վարչական կառուցվածքի, տարածքային փոփոխությունների, քաղաքների և հարակից նմանաբնույթ այլ հարցերի մասին հավաստի աղբյուր է «Աշխարհացույց»-ը:

Նկարագրելով Աղվանքի սահմանները՝ «Աշխարհացույց»-ի հեղինակը մասնավորապես նշում է. «Աշխարհ Աղբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչև ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով…»[14]: Այսինքն՝ Հայաստանի և Աղվանքի սահմանը անցել է Կուր գետի երկարությամբ, սակայն ադրբեջանցի պատմաբանները միտումնավոր անտեսում են սկզբնաղբյուրի հաղորդած տեղեկությունները կամ, ընտրելով այն, ինչ հարմարվում է իրենց տեսակետներին, փորձում են Կուրի և Արաքսի միջև ընկած Մեծ Հայքի Ուտիք ու Արցախ նահանգները տեղադրել հունա-հռոմեական աղբյուրներում հիշատակվող Ալբանիայի տարածքում:

Հայ աշխարհագրագետը մեկից ավելի անգամ է շեշտում Աղվանքի սահմանը Կուր գետով անցնելու մասին. մասնավորապես խոսելով Վիրքի մասին և տալով նրա սահմանները, նշում է. «Աշխարհ Վիրք, յելից կալով Եգերայ, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչև ցԱղուանից սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն»[15]: Ուսումնասիրողների կողմից ապացուցված փաստ է, որ Վիրքին և Աղվանքի մասին հատվածները Անանիա Շիրակացին գրել է իր կողմից հավաքած իրական փաստերի, նոր նյութի հիման վրա, և սկզբնաղբյուրի իրենց արժեքով հետ չեն մնում Մեծ Հայքին նվիրված բաժնից[16]:

Աղվանքի պատմաաշխարհագրության, սահմանների, գավառների, գետային ցանցի և այլ բնակավայրերի մասին հայկական սկզբնաղբյուրներում «Աշխարհացույց»-ից հետո միակ ու անփոխարինելի աղբյուր է Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատությունը[17]:

Աշխատության սկզբում Կաղանկատվացին տալիս է իր նկարագրելիք երկրամասի աշխարհագրական սահմանները. «Ապա կարգեաց նոցա առաջնորդ և վերակացուս, յորոց գլխաւոր ոմն ի Սիսական տոհմէ Յաբեթական ծննդոցն կարգի հրամանաւ Վաղարշակայ, Առան անուն, որ ժառանգեաց զդաշտս և զլերինս Աղուանից՝ ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ»[18]: Թվում է,

---

Վարդանյան. «Աշխարհացույց»-ի ուսումնասիրության համառոտ պատմություն.– Հայոց պատմության հարցեր, Երևան, 2008, № 9, էջ 23-36:

[14] *Աշխարհացույց, էջ 28-29:*

[15] *Նույն տեղում, էջ 28:*

[16] *Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 77:*

[17] *Դրա մեծ մասը գրվել է VII դ., երրորդ մասը գրել է X դարում Մովսես Դասխուրանցին: Աշխատությունն ունեցել է մի շարք հրատարակություններ, թարգմանվել է օտար լեզուներով (Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղվանից աշխարհի, Թիֆլիս, 1912,* Мовсэс Каланкатуаци. История страны Алуанк, пер. с древнеарм., предисл. и коммент. Ш. Смбатяна. Ереван, 1984) *ու իր վրա բևեռել տարբեր ազգերի ուսումնասիրողների հետաքրքրությունը: Պատմության մեջ առկա թռուցիկ մի ակնարկից գիտենք, որ Աղվանից աշխարհի պատմության հեղինակը Ուտիքից է. «…առ ստորոտով լերինն՝ որ է յանդիման գեղջն մեծի կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի՝ յորմէ և ես» (Կաղանկատվացի. Բ, գլ. ԺԱ, էջ 137): Այս վկայությամբ պայմանավորված, հետագա ուսումնասիրողները պատմիչին կոչում են Կաղանկատվացի:*

[18] *Կաղանկատվացի, Ա, գլ. Դ., էջ 8:*

թե այստեղ հարց չպիտի առաջանա, քանի որ վերը նշված տարածքում փռված են Հայկական Ուտիքը և Արցախը, իսկ Հնարակերտ ամրոցը գտնվում է Կուրի աջ ափին: Սակայն ադրբեջանցի պատմաբանները ճգնում են ապացուցել, որ Մովսես Կաղանկատվացին նկարագրում է Կովկասյան Ալբանիայի տարածքը, որը, ինչպես գիտենք, ընկած է Կուրի ձախ ափին: Պատմության ռուսերեն թարգմանությունը կատարելիս Ք. Պատկանյանը առաջաբանում նշում է. «Մովսես Կաղանկատվացին չի խոսում աղվան ժողովրդի մասին, այստեղ առավել հանգամանալից խոսվում է պարսիկների, հոների, խազարների, քան ալբանացիների մասին»[19]: Իսկ Հ. Սվազյանը, տալով Մովսես Կաղանկատվացու աշխատությունում հիշատակվող մեծ ու փոքր բնակավայրերի տեղադրությունը, ցույց է տալիս, որ դրանք բոլորը գտնվում են Կուրի և Արաքսի միջագետքում[20]:

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը» Հայաստանի հյուսիսարևելյան երկրամասի պատմությունն է և ունի այն առավելությունը, որ ներկայացվում է ոչ թե մեկուսի, այլ ճիշտ հակառակը: Պատմիչը Հայոց Արևելից կողմանց պատմությունը շարադրում է Մեծ Հայքի պատմության հետ շաղկապված ու միահյուսված, հանգամանք, որ հեղինակի ու նրա գրքի կարևոր արժանիքը պետք է համարել: Մովսես Կաղանկատվացին Հայաստանի ընդհանուր պատմությունը կապում է հարևան երկրների ու ժողովուրդների պատմության հետ ևս: Հարևան երկրների պատմությանը տեղյակ լինելու շնորհիվ պատմիչը կարողանում է իր հայրենիքի պատմության առանձին դրվագներ ու դեպքեր կապել, մասնավորապես, Աղվանքի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, Արաբական խալիֆայության ու մյուս երկրների պատմության համանման իրադարձությունների հետ և անել ճշմարիտ ու համոզիչ եզրակացություններ:

Աղվանքի պատմության որոշ հարցեր իրենց արտացոլումն են գտել Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունում[21]: Պատմիչի հաղորդած առանձին իրադարձություններից տեղեկանում ենք IV դ. Անդրկովկասում աշխարհագրական սահմանների վերաբերյալ: Անդրադառնալով Սանեսանի կատարած արշավանքին Հայաստան՝ Փավստոս Բուզանդը նշում է, որ նրան էին միացել Աղվանից նախարարները, ինչպես նաև Սանեսանը, որն իր բանակով Հայաստան մտնելու համար պետք է անցներ Կուր գետը. «Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհի»[22]: Նրա տեղեկությունից ելնելով՝ վստահորեն կարելի է ասել, որ IV դ. սկզբին Հայաստանի և Աղվանքի սահմանը եղել է Կուր գետը, բացառությամբ 360-ական թվականները. Աղվանքը, օգտվելով Հայաստանում տիրող քաղաքական խառը վիճակից, զավթեց հայկական մի քանի գավառներ: Սակայն Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը վերագր-

---

[19] История Агван Моисея Каганкатваци, писателя X в., пер. с древнеарм. К. Патканова. СПб., 1861, с. 12.

[20] *Հ. Ս վ ա զ յ ա ն. «Աղվանից աշխարհ» հասկացողությունը ըստ Մովսես Կաղանկատվացու.– ԲՀԱ, 1973, № 1, էջ 225-234:*

[21] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1987:*

[22] *Նույն տեղում, դպ. Գ, գլ. Է, էջ 28:*

ավում է հայկական գավառները և ինչպես նախկինում Կուրը պետական-քաղաքական սահման դարձավ Աղվանքի և Մեծ Հայքի միջև. «Առնէր պատերազմ ընդ երկրին Աղուանից, հարկանէր զնոսա ի հարուածս, անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին...»[23]:

Միջնադարյան պատմագիտության ականավոր ներկայացուցիչ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ, անդրադառնալով հայ-աղվանական հարաբերություններին, լուսաբանում է նաև սահմանային հարցեր՝ մասնավորապես տալով իր ճանաչած Աղվանքի, այն է՝ Հայոց Արևելից կողմաց սահմանները, նշելով. «...Միսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ...»[24], ապա շարունակում է. «Եւ ի սորա ծննդոց այս Առան անունի և քաջ կարգեաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ: Ի սորա զաւակաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդէացւոց և Գարագացւոց իշխանութիւնն»[25]: Ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Սվազյանը. «Մովսես Խորենացու այս տեղեկությունը վերաբերում է հայոց աշխարհում կատարված փոփոխություններին, քանի որ հիշյալ տարածքում՝ Արաքս գետից մինչև Հնարակերտ ներառնված են հայկական Ուտիքը, Արցախը և այստեղ ապրող ցեղերը»[26]:

Հայ մատենագիտական գանձարանում իր պատվավոր տեղն ունի Եղիշեի նշանավոր աշխատությունը[27], որտեղ պատմիչն անդրադառնում է V դ. Անդրկովկասում կատարված իրադարձություններին: Եղիշեի տեղեկություններից իմանում ենք տարածաշրջանում կատարված վարչական փոփոխությունների մասին: Դրանց համաձայն Աղվանքի վարչաքաղաքական վիճակը փոխվել էր, իսկ Արցախը 450–451 թթ. ապստամբության ժամանակ գտնվում էր մարզպանական Հայաստանի կազմում[28]: Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում Կորյունի աշխատությունը[29] Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին Աղվանքում և Վիրքում, որ անուղղակի լույս է սփռում նաև վարչաքաղաքական կացության վրա: Աղվանքում իր առաքելությունն ավարտելուց հետո Մեսրոպ Մաշտոցն անցնում է Կուրի աջափնյակը. «Եւ հանդէպ հասեալ զայր Գարդմանական ձորոյն: Ընդ առաջ լինէր նմա իշխանն Գարդմանից, որում [անուն] Խուրս կոչէին...»[30]: Ապա Գարդմանով նա անցնում է Վիրք: Սրանից եզ-

---

[23] *Նույն տեղում, դպ. Ե, գլ. ԺԳ, էջ 320–322:*

[24] *Խ ո ր է ն ա ց ի, գ. Բ, գլ., Ը, էջ 113:*

[25] *Նույն տեղում:*

[26] *Հ. Ս վ ա զ յ ա ն. Աղվանքը սկզբնաղբյուրներում..., էջ 113:*

[27] *Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957:*

[28] *Նույն տեղում, էջ 10, 94:*

[29] *Կ ո ր յ ո ւ ն. Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմ. առաջաբանով և ծանոթ. ի ձեռն պրոֆ. դ-ր Մ. Աբեղյանի, Երևան 1941:*

[30] *Նույն տեղում, էջ 72:*

բահանգում ենք, որ V դ. սկզբին մարզպանական Հայաստանի և Աղվանքի միջև քաղաքական սահմանները մնացել էին անփոփոխ, քանի որ Մաշտոցը Կուրի ձախափնյակում է հրաժեշտ տալիս Աղվանից եկեղեցուն և գալիս աջ ափը՝ Գարդման:

Հայաստանի, մասնավորապես, նրա արևելյան շրջանների մասին հարուստ տեղեկություն է հաղորդում Վարդան Արևելցին իր «Աշխարհացոյց»-ում[31], որի պարունակած նյութը մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխարհագրական, տեղագրական, վարչատարածքային բաժանումների, քաղաքների, գյուղերի տեղադրության առումով: Հոգևորական պատմիչը Հայոց Արևելից կողմանաց աշխարհագրական վիճակի մասին նշում է. «Ուտի ի մտից կայ Երասխոյ, ի մէջ Արցախայ և Կուր գետոյ, որ է Քուռ»[32]:

Եվս մեկ անգամ հայկական սկզբնաղբյուրը փաստում է, որ սխալվում են այն հեղինակները, որոնք փորձում են արհեստականորեն ընդարձակել Կովկասյան Ալբանիայի սահմանները: XIII դարում Վարդան վարդապետը տվել է Մեծ Հայքի նահանգների տեղադրությունը «Աշխարհացոյց»-ում, որի մաս էին թե(Ուտիքը, թե(Արցախը, որոնք բուն Աղվանքից բաժանվում էին Կուր գետով:

Անդրկովկասի՝ մասնավորապես Աղվանքի պատմության առանձին հարցերի, ցեղային կազմի, քաղաքական սահմանների, Պարսկաստանի վարած կրոնական քաղաքականության, արաբական առաջին արշավանքների, վերջիններիս հարկային քաղաքականության, եկեղեցական հարաբերությունների մասին տեղեկություններ են հայտնում Ագաթանգեղոսը (V դ.)[33], Ղազար Փարպեցին (V դ.)[34], Մեբեռոսը (VII դ.)[35], Ղևոնդը (VIII դ.)[36], Հովհաննես Դրասխանակերտցին (IX–X դդ.)[37], Ստ. Օրբելյանը (XIII դ.)[38], Ասողիկը (X–XI դդ.)[39], Կ. Գանձակեցին (XIII դ.)[40] և ուրիշներ: Այսպիսով, հայկական սկզբնաղբյուրների քննությունը մեզ բերում է այն համոզման, որ Մեծ Հայքի և Աղվանքի սահմանը Հայկական լեռնաշխարհում պետականության ստեղծման պահից (Վանի թագավորություն) մինչ V դարի II կեսը միանշանակ եղել է Կուր գետը:

Մ. թ. ա. I և մ. թ. I–III դդ. համաշխարհային պատմության մեջ համարվում են մշակութային զարգացման ժամանակաշրջան, երբ հրապարակ ելան ոչ միայն պատմագիտական, այլև աշխարհագրական նշանավոր գործեր, որոնք մեզ տե-

---

[31] *Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, Փարիզ, 1960.*

[32] *Նույն տեղում, էջ 10 -11:*

[33] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանցի, Տփղիս, 1909:*

[34] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982:*

[35] *Պատմութիւն Մեբեռոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979:*

[36] *Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1977:*

[37] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:*

[38] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն. Սյունիքի Պատմություն, թարգ., ներած. և ծանոթ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986:*

[39] *Ստեփանոս Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:*

[40] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:*

ղեկություններ են տալիս Անդրկովկասի, մասնավորապես, Աղվանքի թե(աշխարհագրական դիրքի և թե(վարչատարածքային բաժանման մասին:

Մ. թ. ա. I դ. մինչև մ. թ. I դարի սկզբներն ընկած ժամանակաշրջանի Աղվանքի քաղաքական, սահմանների, բնական հարստությունների, էթնիկական կազմի, տնտեսության մասին անփոխարինելի աղբյուր է Ստրաբոնի «Աշխարհագրությունը»[41]: Աշխատությունը բաղկացած է տասնյոթ գրքից, որի տասնմեկերորդ գրքի չորրորդ գլուխն ամբողջությամբ վերաբերում է Անդրկովկասին: Հույն աշխարհագրագետը առաջին հեղինակն է, որ տալիս է Աղվանքի սահմանները: Դրան զուգահեռ պատկերացում ենք կազմում նաև Հայաստանի ու Վիրքի սահմանների վերաբերյալ:

Ըստ Ստրաբոնի՝ «Աղվանքը գտնվում է Վրաստանի և Կասպից ծովի միջև. արևելքից հասնում է ծովին, իսկ արևմուտքից սահմանակից է Վրաստանին, հյուսիսում պարփակված է Կովկասյան լեռներով, ինչպես Կամբիսենեն, որ գտնվում է այնտեղ, ուր Վրաստանը, Աղվանքը և Հայաստանը իրար են կտրում»[42]: Հույն աշխարհագրագետի տեղեկությունը հաստատվում է «Աշխարհացույց»-ի համանման հիշատակությամբ[43]: Մեկ այլ առիթով, խոսելով Արարատյան դաշտի մասին, Ստրաբոնը նշում է. «...Արաքս գետը հոսում է Աղվանքի ծայրով, թափվում է Կասպից ծով և Շակաշենը, որը սահմանակից է Աղվանքին և Կուր գետին...»[44]: Սակայն ադրբեջանցի պատմաբանները վերափոխում են սկզբնաղբյուրի տեղեկությունը:

Այսպես՝ Ստրաբոնը հաղորդում է. «Արաքսը հոսում է մինչև Ալբանիայի սահմանները»[45], որից երևում է, որ Արաքսը չէ Աղվանքի սահմանը, այլ իր հոսանքով հասնում է նրա սահմանները, սակայն Ք. Ալիևը վերափոխելով գրում է. «Արաքսը հոսում, մտնում է Ալբանիայի սահմանները»[46]:

Միջդեռ Ստրաբոնը Արաքսը չի համարում Աղվանքով հոսող գետ, իսկ Ք. Ալիևը և մյուս ադրբեջանցի պատմաբանները փոխում են սկզբնաղբյուրի հաղորդումը իրենց հայեցողությամբ, փորձում են Ստրաբոնի և մյուս անտիկ հեղինակների աշխատությունների տողերի արանքից դուրս քաշել հաղորդումներ, որոնք կվկայեն, որ Կուրի և Արաքսի միջագետքը պատկանել է Կովկասյան Ալբանիային, իսկ քանի որ այդպիսի տվյալներ չկան, նրանք էլ սկզբնաղբյուրը թարգմանում են այնպես, ինչպես իրենց է անհրաժեշտ:

Աղվանքի պատմական աշխարհագրության, հայ-աղվանական հարաբերությունների, սահմանային խնդիրների մասին տեղեկություններ է հայտնում հռոմեացի հեղինակ Պլինիուս Ավագն իր «Բնական պատմություն» աշխատությու-

---

[41] С т р а б о н. География, пер. и комм. Л. Г. Стратановского. М., 1964; *Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1940:*

[42] *Ս տ ր ա բ ո ն, էջ 31:*

[43] *Աշխարհացույց, էջ 28-29:*

[44] *Ս տ ր ա բ ո ն, էջ 55:*

[45] С т р а б о н. География. XI. XIV. 4.

[46] К. А л и е в. Кавказская Албания (I век до. н. э. – I в. н. э). Баку, 1974, с. 114.

նում[47]: Հայ-աղվանական հարաբերությունները նկարագրելիս հռոմեացի հեղինակի տեղեկություններից եզրահանգում ենք, որ Աղվանքը վասալական կախման մեջ է եղել Արտաշեսյան Հայաստանից: Անդրադառնալով Աղվանքի աշխարհագրական սահմաններին, մասնավորապես, նշում է. «Աղվանները տարածված են Կովկասյան լեռների վրա, և նրանց երկիրը ձգվում է մինչև Հայաստանի ու Իբերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը»[48]: Պլինիուսի հաղորդած տեղեկություններից կարելի է որոշել մայրաքաղաք Կապաղակի տեղադրությունը, տալիս է Ավանքի գետային ցանցի նկարագրությունը, ապա նշում է, որ Արաքսը միանում է Կուր գետին, թափվում է Կասպից ծով, ոչ թե առանձին է հասնում ծովին: Թվարկում է Կովկասյան լեռներից սկիզբ առնող ու Աղվանքով հոսող և Կուրը թափվող գետերը: Աղվանքի մյուս շրջանների տեղադրությունն ու աշխարհագրական անունները Պլինիուսի մոտ հավաստի են, քանի որ հեղինակը հիշատակում է մի շարք այլ աղբյուրներ, որոնցից օգտվել է:

Մեզ հասել է Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ուղեցույց»[49] աշխատությունը, որտեղ հեղինակը, մի ամբողջ գլուխ հատկացնելով Աղվանքի նկարագրությանը, բարեխղճորեն տալիս է վերջինիս աշխարհագրական դիրքի ամենամանրամասն նկարագրությունը, նշելով. «Աղվանքը հյուսիսից սահմանակից է Սարմատիային, արևմուտքից Իբերիային, հարավից՝ Մեծ Հայքի մի մասին՝ ձգված Իբերիայի սահմանից մինչև Վրկանա ծով, Կուրի գետաբերանը»[50]: Ապա ավելացնում է. «Կուրը, հոսելով Իբերիայի ու Ալբանիայի երկարությամբ, նրանցից բաժանում է Հայաստանը»[51]: Այսինքն՝ Կուրը Իբերիայից ու Աղվանքից անջատում է Հայաստանը: Ոչ միայն Կլավդիոս Պտղոմեոսը, այլև վերը թվարկված հայ և օտար սկզբնաղբյուրները Հայաստանի ու Աղվանքի սահմանը ճանաչում են Կուր գետը: Պտղոմեոսը նկարագրում է նաև մեծ թվով աշխարհագրական բնակավայրեր, քաղաքներ, որոնցից էլ ուսումնասիրողները պատկերացում են կազմում Կովկասյան այդ երկրի մասին:

Մ. թ. ա. I դարի քաղաքական պատմությունը, պատմաաշխարհագրական վիճակը պարունակող տեղեկություններ է հաղորդում Պլուտարքոսը «Համեմատական կենսագրություններ» աշխատությունում[52]: Նկարագրելով հռոմեական զորավար Պոմպեոսի արշավանքը Աղվանք՝ պատմիչը նշում է, որ Պոնտոսի արքա Միհրդատ VI-ին հետապնդելիս Պոմպեոսը բախվում է նաև աղվանցիների հետ: Աղվանական բանակը Պոմպեոսի վրա հարձակվելիս անցել է Կուր գետը, որի նկարագրությունը տալիս է պատմիչը: Հետ մղելով աղվանների գրոհը՝ հռոմեական լեգեոններն անցնում են Կուրը և հնազանդեցնում աղվաններին: Այս փաստը ևս մեկ անգամ

---

[47] Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, собрал и издал с русским переводом В. Латышев, т. II. СПб., 1904. с. 167.

[48] К. Г а н. Известия древних писателей греческих и латинских о Кавказе.– Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Вып. 4. Тифлис, 1884, с. 109.

[49] Известия древних писателей..., т. I, с. 242–243.

[50] К. Г а н. *Նշվ. աշխ., էջ 169:*

[51] Известия древних писателей... т. I, с. 242.

[52] П л у т а р х. Сравнительные жизнеописания. Т. I–III. М., 1961–1964.

ապացուցում է պետական սահմանը Կուրով անցնելու հանգամանքը, քանի որ թե(հռոմեացիները, թե(աղվանները միմյանց դեմ ճակատելու համար պետք է անցնեին Կուր գետը:

Մ. թ. II դարի երկրորդ կեսի և III դարի սկզբի մասին մեզ տեղեկություններ են հաղորդում Հռոմեական կայսրության պաշտոնյա Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» մեծածավալ աշխատությունը[53]: Պատմիչի հողորդած տեղեկությունները հիմնականում արժանահավատ են, քանի որ հեղինակն իր գրաղեցրած դիրքի շնորհիվ անհրաժեշտ պաշտոնական փաստաթղթերը ձեռք էր բերում անարգել: Դիոն Կասսիոսը նկարագրում է Պոմպեոսի արշավանքը Աղվանք, նրանց հարձակումը հռոմեացիների վրա Սատուռնալիայի տոնախմբության ժամանակ: Ինչպես Պլուտարքոսի, այնպես էլ Դիոն Կասսիոսի մոտ Պոմպեոսը Աղվանք մեկնելու համար պետք է անցներ Կուր գետը: Մենք ցույց տվեցինք հայ և օտար սկզբնաղբյուրների տեղեկությունները հունա-հռոմեական աղբյուրներում հիշատակված Ալբանիայի հարավային սահմանի վերաբերյալ: Այսպիսով՝ պատմիչների հաղորդումների ամենապարզ քննությունից ակնհայտ է, որ Աղվանքի և Մեծ Հայքի պետական սահմանը եղել է Կուր գետը, և դա են վկայում թե՛ հայկական, թե՛ հունա-հռոմեական սկզբնաղբյուրները, սակայն որոշ ուսումնասիրողներ խեղաթյուրում են պատմական ճշմարտությունը, աղավաղում դրանք: Անհիմն են ադրբեջանցի հեղինակների փորձերը Մեծ Հայքի Ուտիք և Արցախ նահանգները ներառել կովկասյան Ալբանիայի տարածքում՝ արհեստականորեն պետական սահմանը հասցնելով Արաքս գետին, որը հակասում է թե(պատմական ճշմարտությանը, թե(սկզբնաղբյուրի տեղեկություններին: Դրանք փաստեր են, որոնք չի կարելի ժխտել ոչ մի նորահնար տեսությամբ:

ЮЖНАЯ ГРАНИЦА КАВКАЗСКОЙ АЛБАНИИ В АРМЯНСКИХ И ГРЕКО-РИМСКИХ ПЕРВОИСТОЧНИКАХ

АРГИШТИ ВАРДАНЯН

Р е з ю м е

Кавказская Албания испокон веков была соседней страной Великой Армении. Кавказская Албания, упомянутая в греко-римских источниках как Албания, в Закавказье занимает такую географическую территорию, границы которой в период государственности (с I в. до н.э. до второй половины V в. н.э.) на севере образуют Кавказские горы, на востоке – Каспийское море, на западе– Алазан, а на юге – река Кура. Армянские, греко-римские источники государственной границей между Великой Арменией и соседней – Кавказской Албанией, однозначно признают реку Куру. Согласно источникам, в вышеназванный период правый берег реки Куры – неотъемлемая часть Армении.

[53] *Դ ի ո ն Կ ա ս ս ի ո ս. Հռոմեական պատմություն, թարգ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976:*